# ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ







ՕՐԵՆՍԴԻ
Ր

ԳՈՐԾԱԴԻ
Ր

ԴԱՏԱԿԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ։

# ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂ

**Դատական իշխանության կարևորագույն գործառույթը**

- ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

**Դատական իշխանության հատկանիշները**

- ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
- ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ
- ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը, անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:**

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**ԲԴԽ**
**ԿԱԶՄՎԱԾ Է 10 ԱՆԴԱՄԻՑ**

**5 ԱՆԴԱՄԻՆ ԸՆՏՐՈՒՄ Է ԱԺ**

դատավորի առնվազն տասը տարվա փորձա ռություն ունեցող դատա վորների կազմից

**5 ԱՆԴԱՄԻՆ ԸՆՏՐՈՒՄ Է ԴԸԺ**

միայն Հայաստանի Հանրապետության քաղա քացի հանդիսացող, ընտրական իրավունք ու նեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավա բան գիտնականների և այլ հեղինակավոր իրա վաբանների թվից

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**հաստատում է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և իրականացնում Դատական դեպարտամենտի հիմնադրի բոլոր լիազորությունները** *Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշում:*

**նշանակում և ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարին**

**Դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև սահմանում է Դատական դեպարտամենտի հաստիքների քանակը**

**հաստատում է դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը.**

**դատական կարգադրիչների ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ**

**սահմանում է դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը.**

**սահմանում է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները և ձևերը.** *Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-87 որոշում:*

**սահմանում է դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակները և ձևերը.***Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-86 որոշում:*

**սահմանում է դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու և կրելու կարգը.** *Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. մայիսի 24-ի թիվ ԲԴԽ-36-Ն-6 որոշում:*

**սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը.** *Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. հունվարի 31-ի թիվ ԲԴԽ-7-Ո-30 որոշում::*

**սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները:** *Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. հունվարի 24-ի թիվ ԲԴԽ-5-Ն-2 որոշում:*

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

- **ԿԱԵՆՏՐԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
  - ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ
  - ԲԱԺԻՆՆԵՐ
  - ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- **ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ**
  - ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
  - ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

- Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչություն
- Իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչություն
- Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչություն
- Դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչություն

- Վերահսկողության վարչություն
- Արտաքին կապերի և արարողակարգի վարչություն
- Ֆինանսաբյուջետային վարչություն
- Հաշվապահական հաշվառման վարչություն

- Անձնակազմի կառավարման վարչություն
- Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
- Արձանագրային վարչություն
- Մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայություն

- Համակարգչային ծառայություն
- Ընդհանուր բաժին
- Առաջին բաժին
- Արխիվային փաստաթղթերի պահպանման բաժին

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՌԱՆՁԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

- ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմ
- ՀՀ վարչական դատարանի աշխատակազմ
- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմ
- ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմ
- Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմ
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմ
- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**Դատական կարգադրիչների ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որն ստեղծվում և գործում է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կազմում՝ որպես առանձնացված ստորաբաժանում:**



# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Դատական կարգադրիչների ծառայությունը պետական ծառայության տեսակ է**



# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ



«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք



«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք



Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով:



«Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենք



«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք



«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

**Դատական կարգադրիչների գործունեությունն անձի իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության նկատմամբ պատշաճ հարգանքի դրսևորմամբ իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա**

- **օրինականություն**
- **մարդասիրություն**
- **համաչափություն**
- **թափանցիկություն**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Դատավորի, դատարանում և արտագնա նիստի անցկացման վայրում, ինչպես նաև դրա սպասարկման տարածքում գտնվող դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից
- Տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարում
- Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների տարածքում հասարակական կարգի պահպանումը, Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգի, կցված գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի պահպանություն
- Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Բարձրագույն դատական խորհրդի շենքում, ինչպես նաև դրա սպասարկման տարածքում գտնվող ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից
- Դատական կարգադրիչների ծառայությունն իր խնդիրներն իրականացնելու նպատակով անհրաժեշտության դեպքում համագործակցում է ոստիկանության և պետական այլ մարմինների հետ

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- Դատավորների ընդհանուր ժողովի, դրա հանձնաժողովների, Բարձրագույն դատական խորհրդի, Դատական դեպարտամենտի ղեկավարի և դատական կարգադրիչների ծառայության պետի՝ դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող որոշումների և կարգադրությունների, ինչպես նաև դատական կարգադրիչների բաժինների ու բաժանմունքների պետերին տրված ցուցումների և հանձնարարությունների կատարման ապահովումը
- դատական կարգադրիչների ծառայության գործունեության վիճակագրություն վարումը
- դատական կարգադրիչների ծառայության պետի հանձնարարությունների կատարումը
- դատական կարգադրիչների զենքի և հատուկ միջոցների հաշվառման վարումը
- Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը

# «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ԲԴԽ-5-Ն-2 ՈՐՈՇՈՒՄ:

ՀՀ դատարանների վարչական շենքերի հուսալի պահպանությունը

Աշխատակիցների անվտանգությունը

Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքերի հուսալի պահպանությունը

**Որոշման կատարումն ապահովելու պարտականությունն ը դրված է ԴԿ ծառայության վրա և նպատակ է հետապնդում ապահովել**

Հսկողության իրականացում՝՝ նյութական արժեքները շենքեր ներս բերելու և դուրս տանելու նկատմամբ

# ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մուտքի-ելքի կանոնների պահպանության նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացնում է Դատական կարգադրիչների ծառայության պետը**

**Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում**

Դատական կարգադրիչների ծառայության տվյալ բաժնի պետը:

**Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներում**

համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը և Դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի պետը:

**Բարձրագույն դատական խորհրդի շենքից դուրս տեղակայված դեպարտամենտի այլ ստորաբաժանումներում**

համապատասխան ստորաբաժանման ղեկավարը և Դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի պետը

# ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

*Մուտքի-ելքի կանոնների պահպանության նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացնում է Դատական կարգադրիչների ծառայության պետը*

**Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում**

Դատական կարգադրիչների առայության տվյալ բաժնի պետը

**Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներում**

- համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը
- Դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի պետը

**Բարձրագույն դատական խորհրդի շենքից դուրս տեղակայված դեպարտամենտի այլ ստորաբաժանումներում**

- համապատասխան ստորաբաժանման ղեկավարը
- Դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի պետը

# ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ՌԵԺԻՄԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

**Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուց վածքային և առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքերում սահմանվում է**

**Փակ գոտի**

**Բաց գոտի**

**Արգելված գոտի**

**Սահմանափակ գոտի**

Մուտքի-ելքի կանոնները տարածվում են Դատական դեպարտամենտի կենտրո նական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների վար չական շենքերի ***բաց և փակ գոտիներ մուտք գործող բոլոր անձանց վրա***

# «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍՆ» ԲԴԽ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ

**մուտքի-ելքի ընդհանուր կանոններ**

**մուտքի-ելքի կանոններ, որոնք տարածվում են բաց գոտիների վրա**

**մուտքի-ելքի կանոններ, որոնք տարածվում են փակ գոտիների վրա**

# ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ակնհայտ ոչ սթափ վիճակում Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքեր մուտք գործելն արգելվում է

Աշխատանքային օրերին ժամը 9:00-ից մինչև 21:00-ն վարչական շենքերում բոլոր անձանց մուտքը և ելքը կատարվում է անցագրային կարգին համապատասխան

Հանգստյան, տոնական և հիշատակի օրերին, ինչպես նաև աշխատանքային օրերին՝ ժամը 21:00-ից մինչև 09:00-ն Դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենք բոլոր անձանց մուտքը և ելքն իրականացվում է *Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Դեպարտամենտի ղեկավարի, կամ վերջինիս տեղակալի թույլտվությամբ:*

Հանգստյան, տոնական և հիշատակի օրերին, ինչպես նաև աշխատանքային օրերին՝ ժամը 21:00-ից մինչև 09:00-ն, դատարանների վարչական շենքեր բոլոր անձանց մուտքը և ելքն իրականացվում է *համապատասխան դատարանի նախագահի, դատավորի կամ աշխատակազմի ղեկավարի թույլտվությամբ*

Եթե դատավորի կամ դատարանի աշխատակազմի ղեկավարի կողմից թույլ է տրվում անձանց մուտքը դատարանի վարչական շենք, ապա այդ մասին տեղեկատվությունը Դատական կարգադրիչների ծառայության համապատասխան բաժնի կամ բաժանմունքի պետի կողմից ներկայացվում է տվյալ դատարանի նախագահին

Նշված օրերին իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլտվության գրավոր հայտի հիման վրա անձանց տրվում է մականգամյա մուտքի անցագիր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գործի քննությունն օրենքին համապատասխան իրականացվում է հանգստյան, տոնական և հիշատակի օրերին, ինչպես նաև աշխատանքային օրերին՝ ժամը 21:00-ից մինչև 09:00-ն:Վ

Արգելվում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքեր զենք և զինամթերք ներս բերելը, բացառությամբ օրենքով նախատեսված կարգով ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված զենք և զինամթերք ներս բերելու դեպքերի:



*Սույն կանոնը չի տարածվում սահմանված կարգով ուղեկցում իրականացնող ոստիկանության աշխատողների և այն դատավորների ու դատական (քաղաքացիական) ծառայողների վրա, որոնք կրում են հաշվեցուցակային զենք*

# ԲԱՑ ԳՈՏԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

- Վարչական շենքի բաց գոտին վարչական շենքի այն հատվածն է, գտնվում են
- գրասենյակի սպասարկաման սրահը
- դատական նիստերի և մյուս դահլիճները
- սպասասրահները

Վարչական շենքերի բաց գոտիներ մուտքն ազատ է դատարան այցելող բոլոր անձանց համար:

# ՓԱԿ ԳՈՏԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

- Արգելված գոտիները
- սահմանա փակ գոտիները

**Վարչական շենքի փակ գոտին վարչական շենքի այն հատվածն է, որը ներառում է**

# ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ **ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ** ԳՏՆՎՈՒՄ ԵՆ

**արգելված գոտի**

**դատական նիստերի մասնակցության համար դատարան բերվող ձերբակալված և կալանավորված անձանց կալանախցերը**

**սահմանափակ գոտիներ**

**ընդգրկված են նույն շենքի բաց և արգելված գոտիներում չընդգրկված մյուս տարածքները**

# ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

- **Բարձրագույն դատական խորհրդի նախագահը**
- **Դատական դեպարտամենտի ղեկավարը**
- **Տվյալ դատարանի նախագահը**
- **Մարդու իրավունքների պաշտպանը**
- **Տվյալ դատարանի աշխատակազմի ղեկավարը**
- **սահմանված կարգով ուղեկցումն իրականացնող ոստիկանության աշխատողները**
- **Տվյալ դատարանի դատական կարգադրիչները**
- **բուժօգնություն ցուցաբերող** անձինք /առանձին թույլտվությամբ/
- տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք /առանձին թույլտվությամբ/

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Բարձրագույն դատական խորհրդի անդամները

ՀՀ դատավորները

Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի աշխատողները

Դատական դե պարտամենտի կենտրոնական մարմնում ծառայություն իրականացնող դա տական կարգադրիչները

Համապատասխան կարգով նախատեսված համա պատասխան անցագիր ունեցող անձինք

# ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

- Տվյալ դատարանի դատավորները
- Տվյալ դատարանի աշխատակազմի աշխատողները
- Տվյալ դատարանում ծառայություն իրականացնող դատական կարգադրիչները
- Համապատասխան անցագիր ունեցող անձինք

# ՓԱԿ ԲԱԿԵՐ

## ԲԴԽ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՓԱԿ ԲԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՅԱՆԵԼ

- Բարձրագույն դատական խորհրդի անդամները
- Դեպարտամենտի ղեկավարը
- ՀՀ դատարանների նախագահները
- ՀՀ դատավորները
- Դեպարտամենտի կենտրոնական մարմնի աշխատողները
- ԲԴԽ նիստին մասնակցող անձինք
- ԲԴԽ շենքում ծառայություն իրականացնող դատական կարգադրիչները

# ՓԱԿ ԲԱԿԵՐ

## ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՓԱԿ ԲԱԿԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՅԱՆԵԼ






# ԱՆՑԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

**Անցագրերի միջոցով մուտքի-ելքի կանոններով սահմանված ռեժիմը տարածվում է սահմանափակ գոտիների վրա**




**Անցագրային քարտերը կամ ծառայողական վկայականները** Դեպարտամենտի վարչական շենքե սահմանափակ գոտի մուտք գործելու անցագիր են համարվում համապատասխան վարչական շենքում աշխատողների համար:

## ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ և ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, **ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ**, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ



# ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ՄՈՒՏՔԻ ԱՆՑԱԳԻՐԸ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է, ՈՐՆ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԱՅՑԵԼՈՒԻ՝

1. անունը, ազգանունը

2. նրա կողմից ներկայացված փաստաթղթի տվյալները

2. ընդունողի պաշտոնը, անունը ազգանունը

3.այցելուի մուտք գործելու օրը ժամը

4.այցելության ավարտի ժամը

**Այցելության ավարտի ժամը նշվում է ընդունողի կողմից և հավաստվում նրա ստորագրությամբ:**

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՇԵՆՔԻ՝ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ



- Բարձրագույն դատական խորհրդի անդամը
- Դեպարտամենտի ղեկավարը
- Դեպարտամենտի ղեկավարի տեղակալները
- Դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները
- Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդականը, ինչպես նաև օգնականը՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հանձնարարությամբ
- Բարձրագույն դատական խորհրդի անդամի օգնականը՝ Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան անդամի հանձնարարությամբ
- Դեպարտամենտի ղեկավարի օգնականը՝ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ

# ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

- Տվյալ դատարանի նախագահը
- պալատների նախագահները
- դատավորները
- դատարանի աշխատակազմի ղեկավարը

Այցելուի մուտքը Դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների վարչական շենքերի սահմանափակ գոտի արգելվում է առանց անձը հաստատող փաստաթղթի

բացառությամբ բուժօգնություն ցուցաբերող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց

Անձը հաստատող փաստաթուղթը վերադարձվում է համապատասխան անձին դատական կարգադրիչի կողմից անձի ինքնությունը պարզելուց կամ սահմանափակ գոտի մուտք գործելու համար անցագիրը ձևակերպելուց հետո

# ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

## Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝




անձնագիրը,



նույնականացման քարտը,




զինվորական գրքույկը,



վարորդական իրավունքի վկայականը,



պետական մարմինների աշխատողների համար՝ ծառայողական վկայականը,



փաստաբանի կամ փաստաբանի օգնականի վկայականը,



ՀՀ ոստիկանության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը,



մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը,

# ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

## Փախստականների համար՝

փախստականի վկայական

փախստականի ճամփորդական փաստաթուղթ

# ՎԱՐՁԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

## Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝

- *օտարերկրյա պետության անձնագիրը*
- *անձի ինքնությունը հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը*
- *Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը*
- *Հայաստանի Հանրապետության կացության քարտը*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՎՈՒՄ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ԱՆՑԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ՈՐՆ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է

- դուրս բերողի պաշտոնը
- անունը, ազգանունը
- դուրս բերվող նյութական միջոցի անվանումը
- տեսակը և քանակը
- դուրս բերելու նպատակը և ժամկետները
- թույլատվություն տվող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, որը հավաստվում է նրա ստորագրությամբ

Անցագրային կետի դատական կարգադրիչն անցագրի հակառակ կողմում կատարում է նշում՝ նյութական միջոցի և այն դուրս տանելու ժամանակի մասին

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ապահովում է դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատարանում, արտագնա նիստի անցկացման վայրում, Բարձրագույն դատական խորհրդի շենքում, դրանց սպասարկման տարածքում գտնվող դատական և այլ ծառայողների, ինչպես նաև այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից

ապահովում է դատական նիստի ժամանակ նիստը նախագահողի կամ դատավորի՝ դատական նիստի բնականոն ընթացքի և հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված կարգադրությունների կատարումը

ապահովում է Դատական դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաև շենքի և սպասարկման տարածքի պահպանությունը

ստուգում է դատական նիստերի դահլիճի պատրաստությունը դատական նիստին, դատավորի հանձնարարությամբ ապահովում է դատական գործը և իրեղեն ապացույցները դատական քննության վայր հասցնելը կամ դրանց պահպանումը

դատավորի հանձնարարությամբ կամ իր նախաձեռնությամբ ապահովում է դատական նիստում ապացույցների կամ այլ նյութերի փոխանցումը դատավորին

խափանում է հանցագործությունների և իրավախախտումների կատարումը դատարանում, ի հայտ եկած իրավախախտներին անհրաժեշտության դեպքում վերցնում է արգելանքի՝ ապահովելով նրանց անհապաղ հանձնումը ոստիկանություն

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆ ԻՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝**

1) պարզելու դատարան մուտք գործող, դատական նիստերի դահլիճում գտնվող, ինչպես նաև դատական սանկցիայի ենթարկված անձի ինքնությունը

2) դատարանի որոշման հիման վրա դատական նիստերի դահլիճից հեռացնելու անձին կամ սահմանափակելու այդ որոշման մեջ մատնանշված անձի մուտքը:

3) զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը:

4) «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով և պայմաններում կիրառելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԻՐԵՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ

1) դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատարանում, արտագնա նիստի անցկացման վայրում, Բարձրագույն դատական խորհրդի շենքում, դրանց սպասարկման տարածքում գտնվող դատական և այլ ծառայողների, այլ անձանց, ինչպես նաև դատարանի շենքի վրա կատարվող հարձակումը խափանելիս:

2) դատական կարգադրիչի նկատմամբ ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարելիս կամ դիմադրությունը խափանելիս

3) իրավախախտման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս

4) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված հարձակում կամ դիմադրություն ցույց տալ

5) իրավախախտում թույլ տալու համար բռնված կամ իր անձը ներկայացնելուց հրաժարվող կամ ակնհայտ կեղծ տվյալներ ներկայացնող անձանց արգելանքի վերցնելիս և ոստիկանություն հանձնելիս, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին, անհնազանդություն ցուցաբերել կամ դիմադրություն ցույց տալ դատական կարգադրիչին

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԳՈՐԾԱԴՐԵԼ

- ռետինե մահակներ
- ձեռնաշղթաներ
- ոտնաշղթաներ
- կամ այլ հատուկ միջոցներ

**Հատուկ միջոցներ հատկացնելու և դրանք պահելու կարգը սահմանում է Դատական դեպարտամենտի ղեկավարը**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ Է ԳՈՐԾԱԴՐՎԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՎ

1. Դատարանում, արտագնա նիստի անցկացման վայրում և Բարձրագույն դատական խորհրդի շենքում խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս.
2. դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատարանում, արտագնա նիստի անցկացման վայրում,
3. Բարձրագույն դատական խոր հրդի շենքում,
4. դրանց սպասարկման տարածքում գտնվող դատական և այլ ծառայողների, այլ անձանց կյանքին և առողջությանն սպառնացող զինված հարձակումը հետ մղելիս,
5. զենքին տիրելու փորձերը խափանելիս,
6. ոտնձգություն կատարող անձին վնասազերծելիս

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԶԵՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼԻՍ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

Նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում անձանց կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է

Մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման դեպքերն ու կարգը կանոնակարգված են <<Դատական դեպարտամենտում ծառայության մասին>> ՀՀ օրենքի համապատասխանաբար 56-րդ, 57-րդ և 58-րդ և 59-րդ հոդվածներով

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

2) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.

3) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը.

4) ծառայողական կարգապահությունը պահպանելը.

5) դատական կարգադրիչի վարքագծի կանոնները պահպանելը:

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Դատական կարգադրիչը դատավորի հետ շփվելիս կամ դատական իշխանության մասին խոսելիս իր վարքագծով, դիմելաձևով պետք է արտացոլի մեծ հարգանք դատական իշխանություն կրողների նկատմամբ:

i2. Կարգադրիչները պարտավոր են ծառայության ներկայանալ Կառավարության սահմանված համազգեստով և պատշաճ արտաքին տեսքով: Ոչ պատշաճ արտաքին տեսքով ծառայության ներկայացած կարգադրիչներին չի թույլատրվում անցնել ծառայության: Նման դեպքերում ստորաբաժանման պետը հանձնարարում է ոչ պատշաճ տեսքով ծառայության ներկայացած կարգադրիչին հնարավորին չափ սեղմ ժամկետում շտկել թերությունները և դրանից հետո նոր թույլատրում է վերջինիս անցնել ծառայության: Անհրաժեշտության դեպքում ստորաբաժանման պետը տվյալ կարգադրիչի փոխարեն ժամանակավորապես կարող է ծառայության նշանակել այլ կարգադրիչի:

3. Դատական կարգադրիչն ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դրանից դուրս, պարտավոր է համապատասխան իրավասություն չունեցող անձին չհրապարակել աշխատանքի ընթացքում ձեռք բերած՝ մարդու անձնական և ընտանեկան, պետական, ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնի, ինչպես նաև ոչ գաղտնի տեղեկատվությունը, որը կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը, հեղինակությանը և գործարար համբավին՝ անկախ այդ տեղեկատվության պաշտոնական կամ ոչ պաշտոնական աղբյուրից ստացված լինելու հանգամանքից: Սույն կանոնը չի վերաբերում օրենքով սահմանված կարգով հայցվող տեղեկատվության և դրա տրամադրման կարգին:

4. Դատական կարգադրիչը պարտավոր է չօգտագործել իր պաշտոնեական դիրքը կամ դատական իշխանության հեղինակությունն իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

5. Դատական կարգադրիչը դատավարության մասնակիցների և այլ անձանց հետ շփումներում որոշակի կամ հնարավոր դատական վեճերով (գործերով) չպետք է նրանց ուղղորդի անձնավորված փաստաբաններ և ներկայացուցիչներ ունենալուն, չպետք է ընդունի որևէ նվեր կամ շահավետ այլ առաջարկ:

# ԲԱՑԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԱԾ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ՆԱԵՎ

- Ինչպես անձամբ պահպանել վարքագծի կանոնները, այնպես էլ հետամուտ լինել իր գործընկերների կողմից դրանց պահպանմանը
- Ծառայողական և արտածառայական հարաբերություններում պարտավոր է ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով
- Հարգել մարդու արժանապատվությունը
- Գրավի ակտիվ դիրք, բարձր գնահատի ծառայողական շահը
- Անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը
- Իր ամենօրյա գործառույթներում և շփումներում պետք է լինի քաղաքականապես չեզոք
- Բացառել ցանկացած տիպի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումներ կոլեկտիվի անդամների, դատարան մուտք գործած անձանց հետ



# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Արձակուրդի իրավունք

Վարձատրությ
ան իրավունք

Վկայական ստանալու իրավունք

Համազգեստ ստանալու իրավունք



Նյութական այլ արժեքներ ստանալու իրավունքները


49

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

**ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ**

**ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- **ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ**
- **ԲԱԺԻՆՆԵՐ**
- **ԴԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

- ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԳԵՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
- ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ**

- ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- ապահովում է Դատական դեպարտամենտում ծառայության մասին ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի պահանջների կատարումը
- համակարգում է դատական կարգադրիչների ծառայությունը և իրականացնում դրա ընդհանուր վերահսկողությունը
- ընդունում է դատական կարգադրիչների ծառայության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է կարգադրություններ
- նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, փոփոխում է ծառայողական քննություն կատարողին
- ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես կասեցնել իր կողմից պաշտոնի նշանակված դատական կարգադրիչի լիազորությունները
- խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում դատական կարգադրիչների ծառայության՝ իր կողմից պաշտոնում նշանակված դատական կարգադրիչներին
- իրականացնում է Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1 •ղեկավարում է դատական կարգադրիչների ծառայությունը և հսկողություն է իրականացնում դրա գործունեության նկատմամբ.

2 •Բարձրագույն դատական խորհրդի, Ընդհանուր ժողովի, դրա հանձնաժողովների որոշումների, Բարձրագույն դատական խորհրդի նախագահի, դատարանի նախագահի, ինչպես նաև Դատական դեպարտամենտի ղեկավարի՝ դատական կարգադրիչների ծառայությանը վերաբերող որոշումների և կարգադրությունների կատարումը կազմակերպելու նպատակով ցուցումներ և հանձնարարություններ է տալիս դատական կարգադրիչների բաժինների և բաժանմունքների պետերին.

3 •ընդունում է դատական կարգադրիչների ծառայության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս ցուցումներ.

4 •առաջարկություն է ներկայացնում Դատական դեպարտամենտի ղեկավարին դատական կարգադրիչների ծառայության կառուցվածքի և հաստիքների քանակի վերաբերյալ.

5 •առաջարկություն է ներկայացնում Դատական դեպարտամենտի ղեկավարին դատական կարգադրիչների ծառայության նյութատեխնիկական և ֆինանսատնտեսական ապահովության վերաբերյալ.

6 •քննում է դատական կարգադրիչների վերաբերյալ ներկայացված բողոքները.

7 •իր կողմից պաշտոնի նշանակված անձանց նկատմամբ նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, փոխում է ծառայողական քննություն կատարողին.

8 • ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես կասեցնել իր կողմից պաշտոնի նշանակված դատական կարգադրիչի լիազորությունները.

9 •սահմանում է բաժինների ու բաժանմունքների պետերի կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

10 •ներկայացնում է դատական կարգադրիչների մասնագիտական և հատուկ ուսուցման հայտը.

11 •իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում իր կողմից պաշտոնում նշանակված դատական կարգադրիչներին.

12 •Դատական դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում դատական կարգադրիչների ծառայության գործունեության հաշվետվությունը.

13 •պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է իր իրավասությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

14 •կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

15 •իրականացնում է Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. ապահովում են դատական կարգադրիչների ծառայության խնդիրների իրականացումը համապատասխան բաժնի և բաժանմունքի կողմից
2. համապատասխան բաժնում և բաժանմունքում կազմակերպում են դատական կարգադրիչների ծառայության իրականացումը և հսկողություն են իրականացնում դրա նկատմամբ
3. առաջարկություն են ներկայացնում դատական կարգադրիչների ծառայության պետին համապատասխան բաժնի և բաժանմունքի դատական կարգադրիչներին խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու մասին
4. քննում են համապատասխան բաժնի և բաժանմունքի դատական կարգադրիչների վերաբերյալ բողոքները
5. դատական կարգադրիչներին տալիս են պարտադիր կատարման ենթակա հրամաններ և կարգադրություններ
6. իրականացնում են Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ
7. պատասխանատվություն են կրում համապատասխան բաժնի և բաժանմունքի առջև դրված խնդիրների իրականացման համար

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԽՄԲԵՐԻ




Դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

- գեներալ-մայոր
- գնդապետ
- փոխգնդապետ
- մայոր
- կապիտան
- ավագ լեյտենանտ
- լեյտենանտ
- ավագ ենթասպա
- ենթասպա
- ավագ
- ավագ սերժանտ
- սերժանտ
- կրտսեր սերժանտ

**Դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները**

- բարձրագույն պաշտոններ՝ արդարադատության գեներալ-մայոր
- գլխավոր պաշտոններ՝ արդարադատության գնդապետ
- առաջատար պաշտոններ՝ արդարադատության մայոր
- կրտսեր պաշտոններ՝ արդարադատության ավագ ենթասպա

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼԸ ԵՎ ԿՈՉՈՒՄԻՑ ԶՐԿԵԼԸ

- **Արդարադատության գեներալ-մայոր** (Բարձրագույն պաշտոններ) → **Բարձրագույն դատական խորհրդի նախագահի առաջարկությամբ** → **ՀՀ վարչապետը**
- **Գլխավոր պաշտոններ** → **Դատական դեպարտամենտի ղեկավար**
- **Առաջատար և կրտսեր պաշտոններ** → **ԴԿԾ պետը**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ**

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԸ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԸ

ԴԱՏԱԿԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԺՆԻ ՊԵՏԸ

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԺՆԻ ՊԵՏԵՐԸ

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

*Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների բաժնի պետի տեղակալները*

*Դատական կարգադրիչների արագ արձագանքման և վերլուծական բաժնի գլխավոր մասնագետը*

*Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների բաժանմունքների պետերը*

*Դատական կարգադրիչների արագ արձագանքման և վերլուծական բաժնի առաջատար մասնագետը*

*Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում ծառայություն իրականացնող ավագ դատական կարգադրիչը*

*Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների ավագ դատական կարգադրիչները*

*Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների բաժանմունքների ավագ դատական կարգադրիչները*

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում ծառայություն իրականացնող բաժնի դատական կարգադրիչները

Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների դատական կարգադրիչները

Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումների բաժանմունքների դատական կարգադրիչները

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- արդարադատության կրտսեր սերժանտ – 1 տարի
- արդարադատության սերժանտ – 2 տարի
- արդարադատության ավագ սերժանտ – 3 տարի
- արդարադատության ավագ – 3 տարի
- արդարադատության ենթասպա - 4 տարի
- արդարադատության ավագ ենթասպա – 4 տարի
- արդարադատության լեյտենանտ – 2 տարի
- արդարադատության ավագ լեյտենանտ – 3տարի
- արդարադատության կապիտան – 3 տարի
- արդարադատության մայոր – 4տարի
- արդարադատության փոխգնդապետ -5 տարի

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏԻ ԿՈՉՈՒՄՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՉԻ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է, ԵԹԵ՝

դատական կարգադրիչն ունի կարգապահական տույժ

դատական կարգադրիչի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ ծառայողական քննություն

Հերթական կոչում շնորհելը հետաձգելու դեպքում դատական կարգադրիչի հերթական կոչումը շնորհվում է Օրենքի հոդված 5-րդ մասում նշված խոչընդոտների վերացումից հետո

15-օրյա ժամկետում


ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՏԵՂԱԿԱԼ

# Դատական կարգադրիչների ծառայության կազմում գործող բաժիններն ու բաժանմունքները

**Ընդհանուր բաժին**

**Ֆինանսաբյուջետային և հաշվապահական հաշվառման բաժին**

**Կենտրոնական մարմնում, դատարաններում և դատարանների նստավայրերում ծառայություն իրականացնող բաժիններ և բաժանմունքներ**

**Արագ արձագանքման և վերլուծական բաժին**

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ, ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ

Դատական կարգադրիչների ծառայության Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի ստորաբաժանումը

Դատական կարգադրիչների ծառայության ՀՀ դատարանների ստորաբաժանումները

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Դատական կարգադրիչների ծառայությունում կարող է ընդգրկվելու ՀՀ այն քաղաքացին, ով, անկախ սեռից, ազգությունից, ռասայից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից՝**

- դիմելու պահին նրա 30 տարեկանը չի լրացել: Դիմելու պահին 30 տարեկանը լրացած չլինելու պահանջը չի տարածվում զինված ուժերի, ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, դատախազության, ինչպես նաև հարկադիր կատարման ծառայության ծառայողների (այդ թվում՝ նշված մարմինների նախկին ծառայողների) վրա
- անցել է պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ իգական սեռի քաղաքացիների կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի
- տիրապետում է հայերենին
- իր մասնագիտական գիտելիքներով, գործնական և անձնական հատկանիշներով և առողջական վիճակով կարող է կատարել դատական կարգադրիչի պարտականություններով
- Դատական կարգադրիչների ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել նաև վերը նշված պահանջներին պահանջներին համապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 5-րդ մասով կամ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները:

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գոր ծունակ
- դատական կարգով զրկվել է դատական կարգադրիչների ծառայությունում կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից
- ) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում
- չի համապատասխանում Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին
- դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից
- դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ կրել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքիցՎ

**Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիները ՀՀ պետական դրոշի առջև տալիս են երդում**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Դատական կարգադրիչների ծառայության պաշտոններում նշանակելու և պաշտոնից ազատելու իրավունք ունեն

*Բարձրագույն դատական խորհրդի նախագահը,*

*Դեպարտամենտի ղեկավարը*

*Դատական կարգադրիչների ծառայության պետը*

**Բարձրագույն դատական խորհրդի նախագահը նշանակում և ազատում է**

Ծառայության բարձրագույն խմբի պաշտոններում

**Դատական դեպարտամենտի ղեկավարը նշանակում և ազատում է**

Ծառայության գլխավոր պաշտոններում

Դատական կարգադրիչների ծառայության պետը նշանակում և ազատում է

Ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններում

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎՈՒՄ Է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու դեպքում.

4) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե դատական կարգադրիչին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) ծառայությանը՝ հիվանդության պատճառով ոչ պիտանի լինելու դեպքում.

6) դատական կարգով անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում.

7) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել են առնվազն երկու կարգապահական տույժեր, որոնցից գոնե մեկը՝ պաշտոնի իջեցում կամ կոչման իջեցում՝ մեկ աստիճանով, տույժերից է, կամ ծառայությունից ազատում կարգապահական տույժը կիրառելու դեպքում.

8) վարքագծի կանոնների կոպիտ խախտում թույլ տալու դեպքում.

9) դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

10) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը.

11) քաղաքական կամ հայեցողական կամ պետական այլ պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

12) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.

13) կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա, եթե համապատասխան թափուր պաշտոնի բացակայության պատճառով ավելի ցածր պաշտոնի նշանակելն անհնար է:

Դատական կարգադրիչի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ

Դատական կարգադրիչների պաշտոն զբաղեցնելու համար սահմանային տարիք է համարվում 65 տարեկանը

Սահմանային տարիքը լրանալու դեպքում դատական կարգադրիչի ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 5 տարի ժամկետով՝ նրան պաշտոնի նշանակած անձի կողմից:

Դատական կարգադրիչի ազատումը սահմանային տարիքը լրանալու հիմքով կատարվում է սահմանված տարիքը լրանալուն հաջորդող ամսվա 1-ին

## Դատական կարգադրիչը ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատվում է.

1) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

2) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ այլ պաշտոնի նշանակվելիս.

3) սահմանափակ առողջական վիճակի պատճառով՝ տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.

4) կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա.

5) «ծառայությունից ազատում» կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում

## ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Այն դատական կարգադրիչները, որոնք սահմանված կարգով ճանաչվել են դատական կարգադրիչների ծառայությունում անհիմն փոխադրված, պաշտոնը կամ կոչումն իջեցված, ինչպես նաև ծառայությունից ազատված, ենթակա են ծառայության, կոչումի կամ պաշտոնում վերականգնման:

Դատական կարգադրիչների ծառայությունում փոխադրելու, պաշտոնը կամ կոչումն իջեցնելու, կարգապահական տույժի ենթարկելու, ծառայությունից ազատելու հրամանը դատական կարգադրիչը կարող է բողոքարկել դատական կարգով համապատասխան հրամանն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում



ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌՎԵԼ ԴԵՊՔԵՐԸ

երկարամյա ծառայության համար

ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու համար:

## Դատական կարգադրիչի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1) շնորհակալության հայտարարում

2) միանվագ դրամական պարգևատրում

3) հուշանվերով պարգևատրում

4) **<u>արտահերթ կոչման շնորհում</u>**

5) **<u>կրծքանշանով պարգևատրում</u>**

6) նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը՝ տույժը կիրառած ղեկավարի կամ նրա վերադասի կողմից:

**Դատական կարգադրիչին արտահերթ կոչումը, որպես խրախուսանք, շնորհվում է բացառիկ դեպքերում և կարող է կիրառվել մեկ անգամ ծառայության ամբողջ ընթացքում: Արտահերթ կոչում շնորհելու ձևով խրախուսանքի տեսակը կարող է կիրառել միայն Դատական դեպարտամենտի ղեկավարը:**

# ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

- ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու
- ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու
- օրենքների կամ իրավական այլ ակտերի պահանջները խախտելու
- «Դատական կարգադրիչի վարքագծի կանոնները» խախտելու դեպքերում:

## ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) նկատողություն
2) խիստ նկատողություն
3) պաշտոնի իջեցում
4) կոչման իջեցում՝ մեկ աստիճանով
5) ծառայությունից ազատում:

Կարգապահական տույժերը դատական կարգադրիչների նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, դատական կարգադրիչը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա կարգապահական տույժը համարվում է մարված:

Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից կարգապահական տույժը կարող է հանվել նշանակումից վեց ամիս հետո՝ մինչև մեկ տարին լրանալը, եթե դատական կարգադրիչը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ